ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N4
«ՆԻԿՀ-ԷԱՃ-ԱՊՁԲ-18/3» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի գնահատող հանձնաժողովի նիստի

ք.Երևան 06 նոյեմբերի 2018թ.

ժամը 15:00

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝ Ա.Իսաջանյան
Հանձնաժողովի անդամներ՝ Ա.Գալստյան, Ա.Մնացականյան
Հանձնաժողովի քարտուղար՝ Է. Գրիգորյան

1. Հանձնաժողովի նիստի օրակարգը
(Ա.Իսաջանյան)

Հաստատել հանձնաժողովի նիստի հետևյալ օրակարգը.
1. Հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին,
2. ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից տրամադրված տեղեկություններիգնահատման մասին
3. Մերժված հայտի մասին:
4. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին:

Ընդունվել է որոշում կողմ՝ 3, դեմ՝ 0:

2. ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից տրամադրված տեղեկությունների գնահատման մասին
(Ա.Իսաջանյան)

Ընդունել ի գիտություն, որ 03.11.2018թ-ին ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից տրամադրված եզրակացության առաջին տեղը զբաղեցրած մասնակիցները ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ժամկետանց հարկային պարտավորություններ չունեն, բացառությամբ Ադամանդ-Մեդ ՍՊԸ-ի, որը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունի ժամկետանց հարկային պարտավորություն՝ 9000 ՀՀ դրամի չափով, ինչը գերազանցում է Հրավերի 2-րդ մասի 2.1 կետի 2-րդ ենթակետով սահմանված ժամկետանց պարտավորությունների չափը:

«ՆԻԿՀ-ԷԱՃ-ԱՊՁԲ-18/3» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի Առաջին տեղը զբաղեցրած մասնակիցների կողմից սահմանված ժամկետում հանձնաժողովին են ներկայացվել սույն ընթացակարգին հրավերի II մասի՝ հայտը պատրաստելու հրահանգով նախատեսված փաստաթղթերը (տեղեկությունները):

Համաձայն ներկայացված փաստաթղթերի՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակիցների կողմից հրավերով սահմանված ժամկտում հանձնաժողովին ներկայացված սույն ընթացակարգին հրավերի II մասի՝ հայտը պատրաստելու հրահանգով նախատեսված փաստաթղթերը (տեղեկությունները), համապատասխանում են սույն ընթացակարգի հրավերով և գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջներին:

Ընդունվել է որոշում կողմ՝ 3, դեմ՝ 0

3. Մերժված հայտի մասին
(Ա.Իսաջանյան)

ProTender©
www.protender.am

Հիմք ընդունելով 04 մայիսի 2017թ.-ի 526-Ն Որոշման կարգի 44-րդ կետը, եթե սահմանված ժամկետում տրամադրված տեղեկատվության արդյունքում մասնակցի ներկայացրած հայտարարությունը որակվում է իրականությանը չհամապատասխանող, ապա հայտերի գնահատման նիստում հանձնաժողովի որոշմամբ տվյալ մասնակցի հայտը մերժվում է՝ անկախ մասնակցի կողմից կոմիտեի տրամադրած տեղեկատվությունից տարբերվող տեղեկատվություն ներկայացվելու հանգամանքից, ուստի գնահատող հանձնաժողովը որոշեց մերժել Ադամանդ Մեդ ՍՊԸ-ի հայտը և հրավերով նախատեսված փաստաթղթերի ներկայացման պահանջ ներկայացնել 2-րդ տեղ զբաղեցրած մասնակցին՝ Ինտերմեդ Գրուպ ՍՊԸ-ին:

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում գրավոր տրամադրում է գնումների բողոքարկման խորհրդին: 04 մայիսի 2017թ.-ի 526-Ն Որոշման կարգի 44-րդ կետով սահմանված՝ մասնակցության իրավունք չունենալու հիմքերի առկայության դեպքում սույն կետով նախատեսված տվյալները չեն ներկայացվում լիազորված մարմին, եթե մասնակիցը կամ կոմիտեն լրացուցիչ տեղեկատվությունը ներկայացրել է մինչև հայտերի գնահատման արդյունքների հաստատման նիստին հաջորդող երրորդ աշխատանքային օրը: Լրացուցիչ տեղեկատվությունը ներկայացվում է ինչպես առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից՝ կոմիտեից ստացված գրավոր տեղեկատվությունը գնահատող հանձնաժողովին ներկայացմամբ, այնպես էլ կոմիտեի կողմից տրված նոր տեղեկատվությամբ: Ընդ որում, գնահատող հանձնաժողովի կամ քարտուղարի կողմից կոմիտեին կրկնակի հարցում չի կատարվում:

Ընդունվել է որոշում կողմ՝ 3, դեմ՝ 0

4.Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին:
(Ա.Իսաջանյան)

Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել Ինտերմեդ Գրուպ ՍՊԸ-ի կողմից հրավերով նախատեսված փաստաթղթերի գնահատման օրը «Նորք» ինֆեկցիոն կլինիկական հիվանդանոց ՓԲԸ-ի շենքում, հասցե՝ ք.Երևան , Արմենակյան 153 հասցեում:

Ընդունվել է որոշում կողմ՝ 3, դեմ՝ 0

Հանձնաժողովի նախագահ՝ Ա.Իսաջանյան

Հանձնաժողովի անդամներ՝ Ա.Գալստյան,

Ա.Մնացականյան

Հանձնաժողովի քարտուղար՝ Է. Գրիգորյան

ProTender©
www.protender.am